

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ. հունվար-մարտին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 33.5 մլրդ.դրամ,որը 2002թ. մակարդակը գերազանցել է 6.7%-ով: 2003թ. մարտի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է փետրվարի 135.4%-ը:

Հանրապետությունում սկսվել են գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները:

2003թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 1317 հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք 2002թ. 6120 հեկտարի դիմաց, այդ թվում հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսեր՝ 43 հեկտար (3099), կարտոֆիլ՝ 941 հեկտար (2070), բանջարանոցային մշակաբույսեր՝ 320 հեկտար (615) և կերային մշակաբույսեր՝ 13 հեկտար (336 հեկտարի դիմաց):

2002թ. համեմատությամբ գարնանացանի պակասը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով (ձյուն, անձրև և այլն), ինչն էլ խոչընդոտել է գարնանացանի բնականոն ընթացքը:

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2003թ. ապրիլի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներ)*

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
ք.երևան	0.1	25.0	0.5	125.0	12.3	120.6
Արագածոտն	1.8	112.5	7.7	106.9	4.2	168.0
Արարատ	1.4	116.7	5.0	116.3	5.5	166.7
Արմավիր	2.1	161.5	4.3	107.3	6.0	153.8
Գեղարքունիք	2.6	108.3	12.0	112.1	5.6	155.6
Լոռի	1.6	106.7	7.9	108.2	4.0	210.5
Կոտայք	1.5	100.0	6.9	106.3	48.4	100.4
Շիրակ	2.3	115.0	10.0	113.6	5.3	160.6
Սյունիք	1.3	108.3	5.7	107.5	2.5	138.9
Վայոց ձոր	0.6	100.0	2.5	100.0	2.2	169.2
Տավուշ	1.2	100.0	4.6	102.2	2.7	112.5
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>16.5</b>	<b>107.1</b>	<b>67.1</b>	<b>107.0</b>	<b>98.7</b>	<b>119.9</b>

2003թ. հունվար-մարտին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 1.1 հազ. տոննայով կամ 7.1%-ով, կաթի արտադրությունը՝ 4.4 հազ. տոննայով կամ 7.0%-ով, ձվինը՝ 16.4 մլն. հատով կամ 19.9%-ով:

<sup>1</sup> Ներառյալ ներքին սպառումը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-մարտին»